

## Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



# ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #12

Դեկտեմբեր 2017

Երևան, Հայաստան



# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մանրի վերամշակում .....	3
Տեքստիլ արտադրություն .....	6
Շինարարություն .....	9
R&D .....	12
Տեղեկատվական տեխնոլոգիաներ .....	13
Կոսմետիկա .....	15
Դեղագործություն .....	17
Այլ ոլորտներ .....	19
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	21
Եվրոպական նորություններ և միջոցառումներ .....	23

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

## Մննդի վերամշակում



### Գործարար համագործակցության առաջարկներ

#### Լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական սննդամթերք արտադրող ընկերությունը փնտրում է գործընկերներ ԵՄ-ում և այլ երկրներում: Ընկերությունն ունի բարձրորակ սննդամթերքի պատրաստման և արտադրման երկարաժամկետ փորձ: Ընկերությունը ցանկանում է երկարատև գործարար համագործակցություն հաստատել տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում:

Ծածկագիր. [BOPL20171027003](#)

#### Մեծ Բրիտանիայում գործող վերավաճառողն առաջարկում է համագործակցել լիցենզային պայմանագրի շրջանակում

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որը ներկայացնում է բացառիկ Մատչա տեսակի սպիտակ թեյը որպես սննդամթերքի և խմիչքի մեջ օգտագործվող բաղադրիչ, առաջարկում է լիցենզային պայմանագրի շրջանակում համագործակցել սննդամթերք և ըմպելիքներ արտադրող այն ընկերություններին, որոնք ցանկանում են ընդգրկել արտադրանքի ապացուցված օգուտները իրենց առկա կամ նոր գծերի մեջ:

Ծածկագիր. [BOUK20170801001](#)

---

**Փնտրվում են դիստրիբյուտորներ գերմանական բնական սննդի հավելումներ և բժշկական ապրանքներ տարածելու համար**

Գերմանական ընկերությունը մասնագիտացած է դիետիկ սննդի, դեղերի և դիետիկ հավելումների արտադրության և տարածման մեջ: Դրանք նպաստում են քաշի նվազեցմանը, իմունային համակարգի ամրապնդմանը, լավ ինքնազգացողությանը, դետոքսիկացիային և այլն: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ, որոնք ունեն առողջապահական ոլորտում լավ կապեր:

**Ծածկագիր. BODE20170804001**

**Չեխական հետազոտական ինստիտուտն առաջարկում է իր ծառայությունները**

Գարեջրի ոլորտում գործող Չեխիայի գիտահետազոտական ինստիտուտն առաջարկում է հավատարմագրված վերլուծական փորձարկման լաբորատորիա գարեջրի, այլ ըմպելիքների կամ սննդի, ներմուծված հումքի և բաղադրիչների համար: Կազմակերպությունը նաև առաջարկում է նոր բաղադրատոմսերի և տեխնոլոգիական ընթացակարգերի ստուգում և մշակում: Ինստիտուտն առաջարկում է համագործակցել սննունդ և ըմպելիքներ արտադրող ընկերություններին՝ ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում: Բացի այդ, այն ցանկանում է համագործակցել գործակալների հետ, որոնք կներկայացնեն ինստիտուտի գործունեությունն արտասահմանում :

**Ծածկագիր. BOCZ20170807001**

**Ուկրաինական արտադրողը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական, համատեղ ձեռնարկություն հիմնելու և արտադրական պայմանագրերի շրջանակում**

Ուկրաինական ընկերությունը, որը զբաղվում է երկարաժամկետ պահպանվող սննդային ապրանքների արտադրությամբ, ցանկանում է համագործակցել տարածման, համատեղ ձեռնարկության և արտադրական պայմանագրի շրջանակներում այն գործընկերների հետ, ովքեր ցանկանում են զարգացնել իրենց բիզնեսը տեղական շուկայում:

**Ծածկագիր. BOUA20170913001**

## Գործարար համագործակցության հարցումներ

---

### Խորվաթական ընկերությանն անհրաժեշտ են էկոլոգիապես մաքուր դեղաբույսեր և խոտաբույսեր արտադրողներ

Խորվաթական ընկերությունը փնտրում է խոտաբույսեր արտադրողներ՝ մասնավորապես էկոլոգիապես մաքուր դեղաբույսեր և խոտաբույսեր, իր վերջնական արտադրանքի համար, ինչպիսիք են՝ թեյեր, թեյի խառնուրդներ, դեղաբույսային հիմքով այլ ապրանքներ, դրանք կիրառելու համար: Ակնկալվում է համագործակցություն արտադրական պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BRHR20171019001

### Լեհական ընկերությունը փնտրում է մատակարարներ

Լեհական ընկերությունը փնտրում է չարագեղեն և չրեր մատակարարողներ: Ընկերությունը փնտրում է արտադրողներ, ովքեր կցանկանան համագործակցել տարածման ծառայությունների մատուցման շրջանակում:

Ծածկագիր. BRPL20170110001

### Բուլղարական ընկերությանն անհրաժեշտ են մատակարարներ

Բուլղարական ընկերությունը, որը զբաղվում է չրերի և բանջարեղենի արտադրությամբ և մեծածախ վաճառքով, փնտրում է թարմ մրգեր՝ խնձոր, ծիրան, դեղձ, ինչպես նաև բանջարեղեն՝ լոլիկ, պղպեղ մատակարարողներ: Ընկերությունն առաջարկում է համագործակցել առևտրային գործակալի ծառայությունների մատուցման շրջանակում:

Ծածկագիր. BRBG20170316002

---

## Տեքստիլ արտադրություն



### Գործարար համագործակցության առաջարկներ

#### Ռումինական արտադրողը փնտրում է գործընկերներ արտասահմանում

Ռումինիայի հյուսիս-արևելքում գտնվող ընկերությունը, որն ունի բրդե գործվածքների արտադրության երկարատև փորձ, ցանկանում է համագործակցել արտերկրում ֆինանսական կամ համատեղ ձեռնարկության պայմանագրերի շրջանակում:

Ծածկագիր. BORO20171016001

#### Արտադրողը փնտրում է առևտրի միջնորդներ, արտադրողներ և ենթակապալառուներ

Բնական բուրդ և բամբակյա վերմակներ արտադրող ընկերությունն առաջարկում է լիտվական գործարանից ինչպես մի շարք արտադրանք, այնպես էլ՝ դիզայնի ընդունում և լոգիստիկ ծառայություններ: Ընկերությունը ցանկանում է համագործակցել առևտրային գործակալության կամ արտադրական համաձայնագրի ներքո և կարող է հանդես գալ որպես ենթակապալառու առաջտար և լավ զարգացող տնտեսություններում:

Ծածկագիր. BOLT20171115001

### **Ռուսական արտադրողը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ**

Ռուսական ընկերությունը մասնագիտացած է ռուսական ավանդական նախշերով հագուստի և ազգային հուշանվերների (պայուսակ, գլխարկներ ) արտադրության ոլորտում: Ընկերությունը փնտրում է օտարերկրյա գործընկերներ տարածման ծառայությունների մատուցման և առևտրային գործակալի պայմանագրերի շրջանակներում համագործակցելու համար:

Ծածկագիր. BORU20160201001

### **Ռուսական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ**

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է համաշխարհային ճանաչում ունեցող մուլտֆիլմերի հերոսների պատկերներով անտիսթրես խաղալիքների և փափուկ խաղալիքների, ինչպես նաև մանկական տրիկոտաժե իրերի արտադրությամբ, փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների մատուցման շրջանակում համագործակցելու համար:

Ծածկագիր. BORU20160607002

### **Չեխական արտադրողը ցանկանում է համագործակցել առևտրային գործակալի կամ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում**

Չեխական ընկերությունն արտադրում է արծաթյա մոլեկուլներով հարստացված մանրաթելերից պատրաստված ֆունկցիոնալ հագուստներ, որոնք ունեն ակնհայտ հակաբակտերիալ, դեոդորացնող և հակաբորբոքային ազդեցություններ: Սպորտի և հանգստի ժամանակ նախագծված այս ապրանքները ներառում են իրեց մեջ ներքնազգեստ, գուլպաներ, շապիկներ, ջերմային հագուստ և այլն: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ կամ գործակալներ:

Ծածկագիր. BOCZ20170209002

### **Իտալական ընկերությունը փնտրում է գործընկերներ**

Իտալիայի հարավում (Սիցիլիա) գտնվող կանանց հագուստի դիզայներական ընկերությունը հաջողությամբ ստեղծել է սեփական ապրանքանիշը և արտադրում է տարեկան երկու հավաքածու: Նրանք գերադասում են բացառապես իտալական հումք և վստահում են իրենց հագուստի մոդելավորումը տեղական դերձակներին: Արտասահմանում իր հաճախորդների բազայի ընդլայնման նպատակով նրանք փնտրում են դիստրիբյուտորներ և գործակալներ: Հետագայում նրանք ցանկանում են համագործակցել դիզայներների և արտադրողների հետ արտադրական և ենթակապալառուի պայմանագրերի շրջանակում:

Ծածկագիր. BOIT20161117006

## Գործարար համագործակցության հարցումներ

### Ռուսական ընկերությունը փնտրում է գործընկերներ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է տղամարդկանց հագուստի արտադրությամբ, փնտրում է գործընկերներ արտասահմանում արտադրական, տարածման և ֆրենչայզինգային պայմանագրերի շրջանակում արտադրության որակի և պայմանների բոլոր պահանջներին համապատասխան՝ միասին պատվերներ իրականացնելու համար:

Ծածկագիր. BRRU20170201003

### Ավստրիական ընկերությունը ցանկանում է համագործակցել արտադրական պայմանագրի շրջանակում

Ավստրիական բարձրորակ LED համակարգերով գլխարկներ և գլխակապեր մատակարարողը, փնտրում է եվրոպական ընկերություններ, որոնք կարող են իրականացնել նշված արտադրանքի կարը՝ արտադրական պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BRAT20170714003



# Շինարարություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Բուլղարական ինժեներական ընկերությունն առաջարկում է իր ծառայությունները

Բուլղարական ընկերությունը, որը մասնագիտացած է ստորգետնյա խողովակաշարերի վերականգնման և շինարարության մեջ, առանց խցիկի տեխնոլոգիաների օգտագործման և առանց խցիկի մեքենաների ու սարքավորումների արտադրության ոլորտում, փնտրում է պոտենցիալ գործընկեր շինարարական, ջրամատակարարման, հեռահաղորդակցության, բնական գազի փոխանցման ոլորտում, ինչպես նաև գործընկերներ՝ տեղական ինքնակառավարվող իշխանությունների շրջանում՝ քաղաքապետարաններ, թաղապետարաններ և այլն: Ընկերությունն առաջարկում է համագործակցել ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BOBG20161102001

### Լեհական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական ընկերությունն առաջարկում է վահանակների և ստերիլ խցիկների իր նորարարական հավաքման համակարգը: Համակարգը հիմնված է հատուկ միակցիչների՝ կայունացուցիչների վրա, որոնց շնորհիվ հավաքման գործընթացը 60% -ից ավելի կարճ է, քան առկա այլ լուծումներում. այն պարզ է (կարելի է իրականացնել առանց լրացուցիչ փորձի): Այն ապահովում է հիմքի վրա տեղադրված տախտակի հեռավորությունը բազայից: Ընկերությունը փնտրում է շինարարական ոլորտում փորձ ունեցող արտասահմանյան դիստրիբյուտորներ՝ տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում համագործակցելու համար:

Ծածկագիր. BOPL20171006001

---

**Ռումինական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ արտասահմանում**

Ռումինական ընկերությունը մասնագիտացած է դեկորատիվ սվաղների, աղյուսի և քարերի արտադրության մեջ՝ ապահովելով շինարարության ոլորտում ներքին և արտաքին հարդարման վերաբերյալ պահանջների լայն շրջանակ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում համագործակցելու համար:

**Ծածկագիր. BORO20171019001**

---

**Սլովենական ընկերությունն առաջարկում է համագործակցել արտադրական կամ ենթակապալառուի պայմանագրի շրջանակներում**

Բնակելի բեռնարկղերի համար բաղադրիչներ արտադրող սլովենական ընկերությունն առաջարկում է արտադրական կամ ենթակապալառուի պայմանագրի շրջանակներում համագործակցել հաճախորդների պահանջների և ներկայացված փաստաթղթերի հիման վրա, եռակցված շինությունների արտադրության ուղղությամբ: Ամբողջ արտադրանքը համապատասխանում է EN 1090 EXC 2, EN 3834 ստանդարտներին:

**Ծածկագիր. BOSI20170726003**

---

**Լեհական ընկերությունը փնտրում է գործակալներ և ցանկանում է հանդես գալ որպես ենթակապալառու**

Լեհական էլեկտրական տեղակայմամբ զբաղվող ընկերությունը լայն փորձ ունի էլեկտրական աշխատանքներում և առաջարկում է ծառայությունների լայն շրջանակ՝ տեղադրումից մինչև սպասարկում: Այն տրամադրում է իր ծառայությունները Լեհաստանում և արտասահմանում: Ընկերությունը ցանկանում է համագործակցել առևտրային գործակալի, ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում, ինչպես նաև ցանկանում է հանդես գալ որպես ենթակապալառու:

**Ծածկագիր. BOPL20171009001**

---

**Բելգիական ընկերությունը փնտրում է գործընկերներ**

Բելգիական ընկերությունը մասնագիտացած է առանց ներքին շրջանակի ֆունկցիոնալ տեխնիկական դռների արտադրության և առևտրայնացման գործում, որոնք օգտագործվում են առևտրային շենքերում և հանրային շուկայում (գրասենյակներ, հյուրանոցներ, խանութներ և ժամանցի վայրեր ...): Ընկերությունը փնտրում է գործակալներ/ արտադրողներ, որոնք հետաքրքրված են իրենց ֆունկցիոնալ տեխնիկական դռների առևտրայնացման հարցով:

**Ծածկագիր. BOBE20171012001**

## Գործարար համագործակցության հարցումներ

### Ռումինական ընկերությունը փնտրում է մատակարարներ

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է շինարարական ոլորտում, փնտրում է միջազգային շուկայում շինարարական նյութեր արտադրողներ/մատակարարներ: Ընկերությունը շինարարական բաղադրիչների ոլորտում ցանկանում է համագործակցել տարածման ծառայությունների մատուցման շրջանակում:

Ծածկագիր. BRRO20160330002

### Ռուսական շինարարական ընկերությունը պատրաստ է դառնալ վաճառքի գործակալ՝ տան վերելակներ արտադրողների համար

Քաղաքացիական և արդյունաբերական օբյեկտների շինարարության ոլորտում գործող ռուսական շինարարական ընկերությունը փնտրում է տան վերելակներ արտադրողների՝ առևտրային գործակալության պայմանագրի շրջանակում համագործակցելու համար:

Ծածկագիր. BRRU20170213001



**Erasmus Mundus proposal : 4 համալսարանների կոնսորցիումը փնտրում է գործընկերներ (ընկերություններ, հասարակական կազմակերպություններ և այլն) պալեոնտոլոգիայի / երկրաբանության ոլորտում**

Չորս համալսարանները որոշել են միավորել ուժերը և առաջարկել մագիստրատուրայի առաջին համատեղ ծրագիրը պալեոնտոլոգիայի / երկրաբանության բնագավառում: Կոնսորցիումը փնտրում է մասնավոր / հանրային ոլորտում միջազգային գործընկերների (ընկերությունների, ՀԿ-ների, և այլն), որոնք ունեն մեծ փորձառություն, նավթային հետազոտությունների, գիտական լրագրության, մշակութային տուրիզմի և բնապահպանական ընկերությունների (ազդեցության գնահատում) ոլորտում փորձառություն անցնելու, դասընթացներ տալու կամ ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

**Ծածկագիր. RDES20171019001**

**[Eurostars2] Ցողունային բջիջներ, հետազոտական նյութեր և բջջային թերապիա**

Կորեական ՓՄՁ-ի գործնական պրոֆիլն ընդգրկում է հետազոտական նյութերի մատակարարման, սպասարկման և զարգացող ցողունային բջիջների բուժման ծառայություններ: Կորեական ՓՄՁ-ն իր ուշադրությունը կենտրոնացնում է նոր գյուտերի և նոր արտադրանքի մշակման ու վերականգնողական բժշկության բուժման ռազմավարությունների վրա: Ընկերությունը ցանկանում է համագործակցել գործընկերների հետ Eurostars2- ծրագրի շրջանակում:

**Ծածկագիր. RDKR20171026001**



Business Support on Your Doorstep

## Գործարար համագործակցության առաջարկներ

**Լեհական ծրագրերի մշակման կենտրոնը ցանկանում է համագործակցել  
աութօրսինգային կամ ծառայությունների մատուցման շրջանակում**

Լեհական SS ընկերությունը ցանկանում է երկարաժամկետ միջազգային համագործակցություն հաստատել՝ ծառայությունների մատուցման կամ աութօրսինգի պայմանագրի հիման վրա: Ընկերությունը մասնագիտացած է ծրագրային ապահովման մշակման, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների աութօրսինգի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին առնչվող իրավական և հանրային մրցութային հարցերով խորհրդատվական ծառայություններ մատուցման ոլորտում:

Ծածկագիր. BOPL20171127001

## Փնտրվում են դիստրիբյուտորներ

Ծրագրային և տեխնոլոգիական ծառայությունների ոլորտում մասնագիտացած ավստրիական ընկերությունը ստեղծել է ծրագրային լուծում՝ նախատեսված անհատականացված տրանսպորտային միջոցների տվյալների գրանցման համար: Ծրագրային լուծումը կարող է օգտագործվել ապահով գրանցամատյանների ստեղծման և գրանցված կիլոմետրերի հաշվառման համար:

Ծածկագիր. BOAT20171016001

---

## Մեծ Բրիտանիայում գործող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ

Մեծ Բրիտանիայում իր գործունեությունը ծավալած գործակալությունը մշակում է նորարարական տեխնոլոգիական լուծումներ, որոնք նախատեսված են հաճախորդների թվային հետքերը բարձրացնելու համար: Մատուցվող ծառայությունների շրջանակն ընդգրկում է վեբ-մշակում, վեբ դիզայն, հոստինգ լուծումներ, շարունակական աջակցության և սպասարկման լուծումների տրամադրում, որոնման համակարգի օպտիմալացում (SEO), ինչպես նաև թվային մարքեթինգի ծառայություններ: Ընկերությունը հատկապես մասնագիտանում է կրթական տեխնոլոգիաների ոլորտում: Ներկայումս գործակալությունը ցանկանում է համագործակցել արտասահմանյան գործակալների հետ տարածման ծառայությունների մատուցման կամ առևտրային գործակալության պայմանագրի շրջանակներում:

**Ծածկագիր. BOUK20171108001**

---

## Ռումինական ընկերությունը փնտրում է միջազգային գործընկերներ

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է SS և էլեկտրոնիկայի սպասարկման և վերանորոգման գործում, առաջարկում է իր ծառայությունները միջազգային արտադրողներին և / կամ համակարգիչների ու այլ սարքավորումների դիստրիբյուտորներին, որոնք ցանկանում են մոտք գործել ռումինական շուկա: Ակնկալվում է համագործակցել ծառայությունների մատուցման շրջանակում:

**Ծածկագիր. BORO20171027001**



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Բուլղարական արտադրողն առաջարկում է իր արտադրանքը կոսմետիկա արտադրողներին

Բուլղարական ընկերությունը, որն ունի սեփական դաշտերը, առաջարկում է իր արտադրանքը այն ընկերություններին, որոնք օտագործում են եթերային յուղերը կոսմետիկ միջոցների արտադրության, դեղորայքի, սննդի արտադրության մեջ: Ակնկալվում է համագործակցել արտադրական և տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BOBG20171103001

### Մեծ Բրիտանիայում գործող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ

Մեծ Բրիտանիայում գտնվող կոսմետիկ միջոցներ արտադրող ընկերությունը վերջերս թողարկել է տղամարդկանց կոսմետիկ միջոցների նոր գիծ, որտեղ ներկայացված է նորաձևության և ֆուտբոլի ասպարեզներում հայտնի բրիտանական սպորտային ապրանքանիշը: Արտադրանքը բազմազան է և ներառում է դետոքսային դեմքի սկրաբներ, խոնավեցնող քսուրներ, շամպուններ, բալզամներ: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորների և գործակալների իր արտադրանքը համապատասխան ոլորտի վերավաճառողներին և խանութների ցանցերին վաճառելու համար:

Ծածկագիր. BOUK20171101001

### Հարավկորեական ընկերությունը փնտրում է գործընկերներ

Հարավկորեական ընկերությունը մասնագիտացած է կոսմետիկ միջոցների տարածմամբ 2014թ.ից: Հիմնական արտադրանքը հիմնված է մաշկի խնամքի ավանդական բուսական տեխնոլոգիայի վրա: Այս ընկերությունն այժմ մտադիր է ընդլայնել իր բիզնեսը եվրոպական շուկայում և փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմամբ:

Ծածկագիր. BOKR20170918004

### **Բուլղարական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Բուլղարական ընկերությունը, որն արտադրում է բնական և օրգանական կոսմետիկ միջոցներ ինչպիսիք են՝ շամպուն, ցնցուղի գել, հեղուկ օձառ, փնտրում է գործընկերներ: Ընկերությունն առաջարկում է համագործակցել տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի, ինչպես նաև մասնավոր պիտակով արտադրության շրջանակում:

**Ծածկագիր. BOBG20170926001**

### **Գործարար համագործակցության հարցումներ**

#### **Ռումինական բնական կոսմետիկա արտադրող ընկերությունը փնտրում է մատակարարներ**

Ռումինական բնական կոսմետիկ միջոցներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և արտադրողներ, որոնք կարող են մատակարարել հումք իր արտադրանքի համար: Միջազգային գործընկերների հետ համագործակցությունն ակնկալվում է իրականացնել արտադրական կամ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակում:

**Ծածկագիր. BRRO20171115001**

#### **Լեհական փոքր ընկերությունը ցանկանում է համագործակցել տարածման ծառայությունների մատուցման շրջանակում:**

Լեհական փոքր ընկերությունը, որը վաճառում է օրգանական սնունդ, բնական կոսմետիկա և ամենօրյա պարագաներ, մեկնարկել է «գրոյական աղբ» քաղաքականությունը: Ընկերությունը փնտրում է բերանի հիգիենայի ապրանքներ, որոնք կարող են ունենալ բաց փաթեթավորում և վաճառվել առանց պլաստիկ կամ որևէ այլ ծանր բիո նյութերի առկայությամբ : Ընկերությունը ցանկանում է համագործակցել տարածման ծառայությունների մատուցման շրջանակում:

**Ծածկագիր. BRPL20171020001**



## Դեղագործություն



### Գործարար համագործակցության առաջարկներ

#### Մեծ Բրիտանիայում գործող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Բրիտանական առաջատար ընկերությունը, որը սպասարկում է առողջապահական ոլորտը և մասնագիտացած է ռետինե ծածկույթով արտադրանքի մշակմաման ոլորտում, փնտրում է առողջապահական ոլորտի հետ կապված դիստրիբյուտորներ՝ ոտքերի և ձեռքերի համար իր կողմից լիովին նոր մշակված ջրակայուն պաշտպանիչ ծածկույթների տարածման համար:

Ծածկագիր. BOUK20171108002

#### Լեհական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և առաջակում է արտադրական պայմանագիր

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է բժշկական պարագաների և դիետիկ հավելումների արտադրության և տարածման մեջ, որոնք նպաստում են մարդկանց առողջական կարիքների բարելավմանը, փնտրում է դիստրիբյուտորների, որոնք կվաճառեն իրենց արտադրանքը շուկայում: Ընկերությունն առաջարկում է նաև այլ հաճախորդների ապրանքանիշի տակ հավելումների արտադրություն ըստ նրանց առանձնահատկությունների, ներառյալ փաթեթավորումը, բաղադրությունը և գրանցման կանոնակարգը, որը սահմանվում է երկրի օրենսդրությամբ:

Ծածկագիր. BOPL20170829002

### **Ուկրաինական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Ուկրաինական ընկերությունը, որը գտնվում է էկոլոգիապես մաքուր Լվով շրջանի տարածքում և մասնագիտացած է բարձրորակ բնական հանքային և բժշկական ջրի արտադրությամբ, փնտրում է տեղական շուկայում աշխատող դիստրիբյուտորների և մանրածախ առևտրով զբաղվողների, որոնք ունեն փորձ նաև հյուրանոցների/ռեստորանների/սրճարանների (HoReCa) ոլորտում:

Ծածկագիր. BOUA20171010001

### **Գործարար համագործակցության հարցումներ**

#### **Ռումինական դեղագործական ընկերությունը փնտրում է նոր մատակարարներ**

Ռումինական ընկերությունը, որն առևտրականացնում է դեղագործական արտադրանքը, փնտրում է գործընկերներ, ովքեր ցանկանում են վաճառել իրենց արտադրանքը Ռումինիայում տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում: Ընկերության ուշադրության կենտրոնում են դեղագործական արտադրանքները, ինչպիսիք են սննդային հավելումները, կոսմետիկ միջոցները և մաշկի խնամքի համար նախատեսված կոսմետիկան:

Ծածկագիր. BRRO20170913001



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Բուլղարական արտադրողը ցանկանում է համագործակցել տարածման ծառայությունների մատուցման շրջանակում

Բուլղարական ընկերությունը մասնագիտացված է հողագործության համար որակյալ և ամուր գյուղատնտեսական տեխնիկայի արտադրությամբ, որը նախատեսված է հողի մշակման, մշակաբույսերի և այլ ապրանքներ համար: Ընկերությունը ցանկանում է նոր շուկաներ մուտք գործել և ընդլայնել իր գործունեության ոլորտը՝ տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BOBG20171027001

### Լիտվական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Լիտվական ընկերությունը, որը մասնագիտացած է մասնավոր և հանրային ոլորտի համար չժանգոտվող պողպատից լողավազանի և շատրվանների արտադրության ոլորտում, այժմ ցանկանում է ընդլայնել իր գործունեությունն արտասահմանում և փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BOLT20171109002

### Չեխական ընկերությունն առաջարկում է տեխնիկական կամ արդյունաբերական քիմիական նյութեր արտադրական կամ ենթակապալառուի պայմանագրի շրջանակում

Չեխական ընկերությունը, որը մասնագիտացած է պատվերով պատրաստված առևտրային տեխնիկական, արդյունաբերական կամ տնային տնտեսությունների խնամքի համար քիմիական արտադրանքի ոլորտում, ցանկանում է համագործակցել մասնավոր պիտակի արտադրության կամ ենթակապալառուի և արտադրական պայմանագրերի շրջանակում:

Ծածկագիր. BOCZ20171020001

## Գործարար համագործակցության հարցումներ

### Գերմանական ընկերությունը փնտրում է ենթակապալառու փայլաթիթեղների կտրման համար

Երիտասարդ գերմանական ընկերությունը մասնագիտացած է մարտկոցների արդյունաբերության ոլորտում: Արտադրության ծավալների աճի համար նրանք փնտրում են ենթակապալառու՝ փոքր քանակությամբ փայլաթիթեղների կտրման համար:

Ծածկագիր. BRDE20171120001

### Գերմանական ՓՄՁ-ն ցանկնում է համագործակցել արտադրական պայմանագրի շրջանակում

Գերմանական ընկերությունը, որը վաճառում է իր սեփական ապրանքանիշի ներքո ապրանքներ առցանց և էլեկտրոնյին վաճառքի հարթակներում, ցանկնում է արտադրական պայմանագրի շրջանակում համագործակցել խոհանոցային, կենցաղային, ինչպես նաև լոգարանի և այլ կենցաղային պարագաներ արտադրողների հետ:

Ծածկագիր. BRDE20170116001


### Ղանիացի դիզայները փնտրում է արտադրողներ

Ղանիացի դիզայները մշակել է կենդանիների տեսքով կաղնու փայտից պատրաստված հավաքածու և հիմա փնտրում է արտադրող նմանատիպ բարձորակ աշխատանքների պատրաստման համար:

Ծածկագիր. BRDK20170209001

# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ

## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ



### Իսպանական հետազոտական ըկերությունը ցանկանում է համագործակցել

Իսպանական հետազոտական կենտրոնը, որը գործում է մարդկային էվոյուցիայի բնագավառում, առաջարկում է ռենտգենային միկրո-հաշվարկված տոմոգրաֆիայի տեխնիկական հարթակի օգտագործմամբ տարբեր բնույթ ունեցող օբյեկտների վերլուծություն և ցանկանում է համագործակցել տեխնիկական, հետազոտական և ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակում:

Ծածկագիր. TOES20171011002

### Տեխնոլոգիա խնձորի չորացրած շերտերի արտադրության համար

Լիտվայում գործող ընկերությունն առաջարկում է հատուկ տեխնոլոգիա 8 տարբեր համեր ունեցող խնձորի չորացրած շերտերի արտադրության համար: Թիրախային գործընկերներ կարող են համարվել սնունդ արտադրող փոքր և միջին ընկերությունները, ովքեր ցանկանում են ընդլայնել իրենց արտադրանքի տեսականին: Ընկերությունն առաջարկում է համագործակցել տեխնիկական աջակցությամբ առևտրային պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. TOLV20170120001

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

### Էմալի պաշտպանության և վերականգնման տեխնոլոգիա

Բելգիական սպառողական ապրանքատեսակներով հարուստ ընկերությունը, փնտրում է արտադրանք, որը զգալիորեն վերականգնում է ատամի էմալը: Ակնկալվում է համագործակցել այն արդյունաբերական գործընկերների և գիտահետազոտական ինստիտուտների հետ, որոնք կառաջարկեն համապատասխան լուծումներ լիցենզային կամ տեխնիկական պայմանագրի շրջանակում հմագործակցելու համար:

Ծածկագիր. TRBE20160809001

### Լեհական վեր և շարժական հավելվածներ մշակողը փնտրում է գործընկերներ

Լեհական ընկերությունը, որը զբաղվում է վեբի և բջջային ծրագրերի մշակմամբ, ներկայումս աշխատում է արագ գործող սպառողական ապրանքների (FMCG) արդյունաբերության համար տեղայնացման և չափման համակարգերի մշակմամբ և ցանկանում է գտնել տեսախցիկների հայտնաբերման տեխնոլոգիայով զբաղվող փորձառու գործընկերներ, որոնք կարող են բարելավել առաջարկվող համակարգը: Ակնկալվում է համագործակցել տեխնիկական համագործակցության պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. TRPL20170627001

## Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2018 թ. -ի հունվար, փետրվար ամսվա ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

### Հունվար

23/01/2018	<p><b>Brno Industry 4.0 Matchmaking Conference (Բոնո, Չեխիա)</b></p> <p>Brno Industry 4.0 Գործարար համագործակցության հաստատման կոնֆերանս</p> <p>Գործարար համագործակցության հաստատման միջոցառում, նվիրված smart արտադրության ոլորտին</p> <p>Ինչ կարելի է ակնկալել.</p> <ul style="list-style-type: none"><li>- մասնագետներ առաջատար տեխնոլոգիական ընկերություններից</li><li>- արդյունաբերական ավտոմատացման և թվայնացման լուծումներ</li><li>- նոր գործընկերների, հաճախորդների և ներդրողների հետ հանդիպելու հնարավորություն</li></ul>
------------	--

13/02/2018	<p><b>Digital technologies - transforming how healthcare is delivered to citizens (Բրիստոլ, Մեծ Բրիտանիա)</b></p> <p>Այս միջոցառումը հնարավորություն է ընձեռում առողջապահական, թվային և ստեղծագործական բիզնեսների համախմբման միջոցով կենտրոնանալ այն հնարավորությունների և առավելությունների վրա, որոնք թվային լուծումները կարող են դարձնել ավելի մատչելի, կենտրոնացված, նպաստել խնամքի արդյունավետ մոդելների ձեռքբերմանը, ինչպես նաև առողջության բարելավմանը:</p>
------------	--



Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

**Նշում:** Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

**Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:**